ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Լուսավոր Հայաստան» կուսակցության
ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Լուսավոր Հայաստան» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2019 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընդգրկող ժամանակաշրջանի համար կազմված Կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն):

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունը, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում Կուսակցության 2019 թվականի տարեկան մուտքերի և ծախսված դրամական միջոցների, անշարժ և շարժական գույքի, ինչպես նաև օտարված կամ դուրս գրված գույքի վերաբերյալ տեղեկատվությունը, համաձայն՝ Կուսակցությունների մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և ՀՀ կառավարության 20 ապրիլի 2017 թվականի թիվ 403-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի, ներկայացման և հրապարակման կարգի պահանջների:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կուսակցությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)*, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում - Ֆինանսական հաշվետվության հիմունքը

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվության կազմման հիմունքին, այն է՝ Կուսակցության ղեկավարությունը ֆինանսական հաշվետվությունը կազմել է՝ հիմնվելով Կուսակցությունների մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և ՀՀ կառավարության 20 ապրիլի 2017 թվականի թիվ 403-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի, ներկայացման և հրապարակման կարգի պահանջների վրա: Ֆինանսական հաշվետվությունը պատրաստված է՝ օժանդակելու Կուսակցությանը բավարարելու Կուսակցությունների մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի պահանջը:

Արդյունքում ֆինանսական հաշվետվությունը կիրառելի չէ այլ նպատակների համար: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հարցի հետ կապված:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության համար

Ղեկավարությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվության պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունը պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կուսակցության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար (եթե կիրառելի է), համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Կուսակցության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունը պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կուսակցությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Կուսակցության ֆինանսական հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվության հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվության ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Մենք կառավարման օղակներում ներգրավված անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվության աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ

տնօրեն Հայկ Մարգարյան

Աուդիտի ղեկավար

Արմեն Ազիզյան

19 փետրվարի 2020թ

ք. Երևան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ

Լուսավոր Հայաստան կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը 2019 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎՈՒՄ ՄՈՒՏՔ ԱՐՎԱԾ ԵՎ ԾԱԽՍՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Հատկացման ձևը (կանխիկ/փոխանցում, բանկային հաշիվ/դրամարկղ)	Այլ տվյալներ
1. Նախորդ տարվանից առաջացած մնացորդը հունվարի 1-ի դրությամբ		**3,190**		
2. Մուտքի վճարներ		-		
3. Անդամակցության վճարներ		**3,996**	կանխիկ	
4. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)՝		**310**		
1) Արեն Պետունց		155	փոխանցում	
2) Միքայելյան Խաչատուր Վահագնի		5	փոխանցում	
3) Խաչատրյան Ալվինա		150	փոխանցում	
5. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)՝		-		
1)				
2)				
3)				
6. Օրենքով նախատեսված կարգով ստացված բյուջետային ֆինանսավորում		**7,057**	փոխանցում	
7. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (նշել գործարքը կամ աղբյուրը)՝		**1,174**		
1) այլ մուտքեր		1,174		
2)				
3)				
8. Ընդամենը մուտք արված դրամական միջոցներ		**12,537**		
9. Ֆիզիկական անձանց տրված վճարներ (աշխատավարձ, ծառայությունների մատուցման վճարներ)		-		
10. Սոցիալական վճարներ		-		

11.Գույքի վարձակալության վճար (նշել գույքի անվանումը, վարձակալության ժամկետները)՝		**2,605**		
1) Բաղրամյանի գրասենյակ, ք. Երևան, Բաղրամյան 1, բն. 24, 31.03.2016-անժամկետ		2,290	կանխիկ	
2) Եղեգնաձորի գրասենյակ, մարզ Վայոց ձոր, համայնք Եղեգնաձոր ք. Նարեկացու փողոց 3/1 31.05.2019-31.05.2020		315	փոխանցում	
3)				
12. Կոմունալ վճարումներ (նշել կոմունալ սպասարկման անվանումը)՝		**420**		
1) էլ. էներգիայի համար		231	կանխիկ	
2) գազի համար		128	կանխիկ	
3) ջրօգտագործման համար		12	կանխիկ	
4) հեռախոսավարձ		49	կանխիկ	
13. Հարկեր և տուրքեր (նշել հարկատեսակը)՝		**284**		
1) Եկամտային հարկ		284	փոխանցում	
2)				
3)				
14. Գույքի ձեռքբերման համար կատարված ծախսեր (նշել գույքի անվանումը և քանակը)՝		-		
1)				
2)				
3)				
15. Տրանսպորտային ծախսեր		-		
16. Գործուղման ծախսեր		-		
17. Այլ ծախսեր		**11,532**	փոխանցում, կանխիկ	
18. Ընդամենը ծախսված դրամական միջոցներ		**14,841**		
19. Մնացորդը տարվա վերջում		**886**		

Կուսակցության ղեկավարի (կուսակցության իրավասու պաշտոնատար անձի) անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ.դրամ)	Գույքի անվանումը, հասցեն, համառոտ նկարագիր, չափսերը	Այլ տվյալներ
1. Առկա անշարժ գույքը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	
2. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)՝	-	-	-	
1)				
2)				
3)				
3. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)՝	-	-	-	
1)				
2)				
3)				
4. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (նշել գործարքը կամ աղբյուրը)՝	-	-	-	
1)				
2)				
3)				
5. Ընդամենը	-	-	-	

Կուսակցության ղեկավարի (կուսակցության իրավասու պաշտոնատար անձի) անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ.դրամ)	Գույքի անվանումը, մակնիշը և սերիան, թողարկման տարեթիվը	Այլ տվյալներ
1. Առկա շարժական գույքը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	
2. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)՝	-	-	-	
1)				
2)				
3)				
3. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)՝	-	-	-	
1)				
2)				
3)				
4. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (նշել գործարքը կամ աղբյուրը)՝	-	-	-	
1)				
2)				
3)				
5. Ընդամենը	-	-	-	

Կուսակցության ղեկավարի (կուսակցության իրավասու պաշտոնատար անձի) անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը

ՕՏԱՐՎԱԾ ԿԱՄ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ

Գույքի անվանումը	Քանակը	Արժեքը	Օտարման ձևը	Այլ տվյալներ
1				
2				
3				

Կուսակցության ղեկավարի (կուսակցության իրավասու պաշտոնատար անձի) անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը